

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Պ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հասարակ 40 փարայ է : — Պոլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառացի մէջ 25 զրոյ, գարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Մանուցման առողջ 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրացրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրու թիւն պէտք է լռողիլ առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից նոր Գրատունը :

Ա. Չ. Ա. Յ. Ի. Ն

Կրեմք թէ՛ վսեմախոյլ Նուպար փաշան, խառգիւղի Շահնաղար—Նուպար գիշերօթիկ վարժարանին Պաշտպանը, գրով խնդրեր է Եուսուֆեան մեծապատիւ Տիգրան էֆէնտիկն օր իւր կողմանէ փոխանորդաբար հոգաբարձութիւն ընէ յիշեալ վարժարանին :

Նորին վսեմութեան այս ընտրութիւնը արգարև գովելի է : Կյուսամբ թէ Եուսուֆեան էֆէնտիկն ազգասիրաբար փոյթ կտանի իրեն եղած խնդիրը կատարելու յօդուս յիշեալ վարժարանին, ուսկից ազգին համար կարևոր ապագայ մը կյուսացուի :

— Երէկ ծանուցինք Տիլլիկիլիեան վարդապետին Մարգուանէն ինքնին մայրաքաղաքս եկած և Պատրիարքարան դայած ըլլալը : Ասի, իրեն համար դեր . Եգեսեանի կողմանէ զըրուածներուն դէմ խտաիւ բողոքած, և թէ իւր սարկաւազութեան և թէ վարդապետութեան վկայողներն ներկայացուցած ըլլալով, Պատրիարքարանը պարտք համարեր է հեռադրով և նամակաւ մանրամասն տեղեկու-

թիւն պահանջել Ատիեամանի առաջնորդ Սրապիոն եպիսկոպոսէն, ուսկից ընդուներ է վարդապետական առախճանը : Ամենայն հետաքրքրութեամբ կուստեմք լսել Սրապիոն եպիսկոպոսին պատասխանը : Տիլլիկիլիեան իբրև արժանաւոր վարդապետ մը կներկայանայ, մինչդեռ գեր . Եգեսեան խիստ գէշ վկայութիւն տրւած է իրեն համար, զոր մենք ալ հրատարակած եմք օրագրոյս մարտ 14ի թուովը :

— Իզմիտէն հանրադիր մը եկած էր Պատրիարքարան, որով կինդրէին օր իզմիտի վիճակն ու Արմաշու վանքը գարձեալ միանան : Իսկ Արմաշու վանուց կողմանէ բողոք եղած էր յիշեալ խնդրոյն դէմ : Խառն ժողովը նկատողութեան առնելով այս խնդիրն ու բողոքը, այս մասին նոր անօրինութիւն մ'ընելը իւր ձեռնհասութեան վեր համարեր, և սահմանադրապէս հաստատուելիք վարչութեան որոշման ձգեր է : Հետևաբար, պայտէս ծանուցուեր է թէ Արմաշի վանհայր դեր . Տ. Գեորգ Ծ. վարդապետին և թէ Իզմիտի փոխառաջնորդին :

Աներկմիտ եմք թէ՛ որ և է ազգա-
յին վարչութիւն չգլխի կրնայ յիշ-
եալ վանքը դարձեալ իզմիտի վիճա-
կին առաջնորդութեան հետ միացու-
նել, քանի որ անոր բաժանմանէն
ի վեր փորձով տեսնուեցաւ թէ այն
վանքը ազգ օգուտ և արդիւնաւոր վի-
ճակի մէջ կգտնուի :

Ազգային լեզուին կարևորութենը

Ազգի մը էութեան գլխաւոր
նշանաբաններէն մէկն է իր լեզուն :
Ասոր համար է որ ամեն ազգաց կա-
ռավարութիւններն ամեն ջանք կը-
նեն որ ազգային լեզուն գործածուի,
և ուրիշ ամեն լեզուներէ՛ դիտու-
թիւններէ և արուեստներէ յառաջ
ազգային լեզուն աւանդուի՞ գալոցա-
կանաց : Այս կարևորագոյն կէտը ու-
շաղբութեան չառնող և այս մասին
անհոգ եզոզ ազգ մը ինքնին իւր ազ-
գութիւնը աշխարհի երեսէն բնաջինջ
ընելու եղած կըլլայ : Ի՞նչ կընէ տէ-
րութիւն մը, երբ կուզէ ազգ մը կոր-
սնցունել. — ամեն ջանք ու միջոց
ի գործ կընէ նոյն ազգին մոռցունել
տալ իւր ազգային լեզուն, խօսա-
կցութեան մէջ գանի արդիւնքով, վար-
ժարանաց մէջէն նոյն լեզուին ուսու-
մը վերցունել տալով և մինչև անգամ
տուգանք սահմանելով նոյն լեզուով
խօսողներուն համար : Այսպէս կրնէ,
կրնէ, Տանկաստանի գրացի վիթ-
խարի տերութիւն մը՝ Լեհացոց հա-
մար, որոց ազգութեան շնչման կը
բաղձայ :

Արդ՝ տեսնենք թէ, մեր ազգը՝
որ իրեն յատուի մայրենի գեղեցիկ լե-
զու մը ունի, որ բարեբաղդաբար Տան-
կաստանի մէջ երբէք արդեւք չունի՛

իւր լեզուովը խօսելու, իր լեզուով
գրելու. որ՝ արդեւք չունի իւր լե-
զուն մշակելու, և ազգային վարժա-
րանաց մէջ ամեն բանէ յառաջ ազ-
գային մանկագոյն իւր լեզուն աւան-
դելու. — մեր ազգը, կրնենք, տես-
նենք թէ ինչպէս կվարուի : Երկար
խորհրդածութեանց հարկ չկայ, հա-
տատելու համար թէ՛ մեր ազգը
բոլորովին սխալ ընթացքի մը մէջ
կգտնուի, հիմա՛ որ ազգային յառա-
ջագիմութիւն կայօտանք, հիմա՛ որ
գասախարակութիւնը ազգին մէջ ընդ-
հանրացունելու հետամտութիւն մը կը
ցուցնենք, չեմք սխալիք եթէ բռնիք
թէ՛ ազգային լեզուի մշակութեան
համար գրեթէ ոչինչ ուշադրութիւն
կայ : Մտի՛ր ազգային վարժարաննե-
րը, քննէ՛ անոնց վիճակը. պիտի տես-
նես որ անոնց գլխաւորներուն մէջ հայ
լեզուին ուսումը ուրիշ լեզուներու
ուսմանէն իրրև շատ անկարևոր բան
մը համարուած է կամ գիտութեամբ
և կամ անգիտութեամբ : Իզական ու
արական սեռէ մանկտին, իրենց մայ-
րենի լեզուն չարված, իրենց մայրենի
լեզուովը ուղիղ խօսելու և երկու տող
բան գրելու չվարժուած՝ Փրանսերէն
լեզուին ուսմամբը զբաղած են . Փը-
րանսերէնը ազգային վարժարանաց
ուսմանց գլխաւորն եղած է, ազգա-
յին վարժարաններն կարծես գաղ-
ղխական վարժարաններ են . ազգա-
յին լեզու, ազգային պատմութիւն,
ազգային կրօնք՝ գրեթէ իրրև ան-
պէտ բաներ՝ ուշադրութենէ ձրգ-
ուած են . գրեթէ ամեն օր գաղղխա-
րէն լեզուի գասախօսութիւն կըլլայ .
մինչդեռ շարված երեսք օր հայերէն
լեզուի գասախօսութիւն կըլլայ . Ծգո՞

մ'ալ տեսնուիլ սկսաւ վարժարանաց
 սնանց մէջ . ամենեւին հայերենի ան-
 տեղեակ գաղղիացի կառավարիչներ
 կըլուին , որպէս զի աղայք լաւ կառա-
 վարուին . բայց դիտողութեան շառ-
 նախը արդեօք թէ Գաղղիացի կա-
 ռավարչաց միջոցաւ գաղղիական լե-
 զուն աւելի յառաջ կերթայ աղային
 ուսանողաց մէջ : Միթէ աւելի այլև
 չըլլա՞ր որ լաւ ու մաքուր հայերէն լի-
 սող Հայ կառավարիչներ դրուելու
 հոգ տարուի : Կհարցունենմք թէ՞ օ-
 տար լեզու մը սովորելու նպատակը ,
 մայրենի լեզուն մշակութիւնը և գոր-
 ծածութիւնը թողլով՝ նոյն լեզունով
 խօսիլն է , թէ՞ այն լեզունով զանազան
 նիւթաց վրայ բնաիր գրուածները կար-
 գալու և կարևոր գաղտնիքներ ստա-
 նալու : Գլխաւոր նպատակն ունի օտար
 լեզուաց ուսումը :

Այս է ահա վարժարանաց վիճա-
 կը՝ աղային լեզուի նկատմամբ : Ե՛լ
 վարժարաններէն դուրս : Պիտի տես-
 նեա որ ամեն ուրիշ աղային անհատ-
 ներ թէ հրապարակի թէ առանձին
 և թէ բնիկական խօսակցութեանց
 մէջ իրենց մայրենի լեզուն կգործա-
 ծեն : Յոյնի մը խիստ դժուարը կու-
 դայ եթէ ուրիշ լեզունով մը խօսիլ
 հարկադրես զինքը : Քիչ կպատահի
 որ երկու յոյն ուրիշ լեզունով խօսին :
 Իսկ մեր աղայինք , թէ շուկան , թէ
 սրճարանը , թէ շոքենաւուց մէջ և
 ուրիշ ամեն տեղուանք գրեթէ միշտ
 օտար լեզուներով կխօսին . կարծես
 թէ Հայ չեն , կամ հայկական լեզուն
 անարգ բան մ'է , և իրենց շահուն՝
 վրաս , ու պատուոյն՝ արատ կրերէ :

Կյաւսամք թէ , այս համառօտ
 սողերը բաւական կըլլան հասկցու-

նել մեր դիտաւորութիւնը : Մեր աղ-
 գայինք , եթէ կսիրեն իրենց աղը ,
 եթէ նախանձախնդիր են աղղութեան
 պատուոյ , պարտաւոր են աղղային
 լեզուն գործածել միշտ , և իրենց
 սրբւոյցը աղղային լեզուն աւանդել
 սող ամեն բանէ յառաջ :

—————
 ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Չըրազանի պալատին շինութիւ-
 նը մեծ գործ օնեւութեամբ կկատար-
 ուի : Արդէն Միջագիւղի ճամբուն
 վրայ դանուած պատը վար առնուե-
 լով տեղը երկաթէ գեղեցիկ (թահ-
 թա բէրտէ) մը կշինուի :

— Հեռագրատան անօրինութեան
 կողմանէ ծանուցուել է որ Սամսոնի
 մէջ ուր միայն տաճկերէն լեզուա-
 կհեռագրուէր , օտար լեզուով ալ
 պիտի կրնայ ըլլալ , և կոստանդնու-
 պօլսէն մինչև Սամսոն 20 բաւի հա-
 մար 43 գահեկան ողջ ստակ է գինը :

— Էլ վրնիթ Հէրբլա հեռուեալ կեր-
 սիւ կնկարագրէ , Տօբլա—Պաղչէի
 կայսերական պալատին մէջ կալէսի
 իշխանին և իշխանուհւոյն շարաթ ե-
 րեկոյ եղած բնդունելու թիւնը օգոտո-
 Սուլթանին կողմանէ :

« Իշխանն ու իշխանուհին , ուրիշ
 հրաւիրելոց հետ , նոյն իբրևոնը պա-
 լատը գացին : Մասնաւորապէս զար-
 դարեալ սրահի մը մէջ մէկ քանի վայր-
 կեան հանգստանալէն ետքը , կայսե-
 րական պաշտօնեացք անոնց ներկա-
 յացան : Քիչ մ'ատենէն կերակուրի
 սենեակը կերթան , օգոտո . Սուլթա-
 նը իշխանուհւոյն թնք մտած , և իշ-
 խանը Տիկին Իկնաթիէֆին հետ : Սե-
 զանին գլուխը բազմեցաւ օգոտա .

Սուլթանը . աջ կարմիր իշխանուհին ու
 ըուն քոմն էր բարձ . Մեծեպարքորը
 որ միանգամայն թարգմանութիւն կը
 նէր . ձախ կողմը նասած էր իշխանը .
 քովը՝ Տիկին իկնաթիէֆ . սննոց քո
 վը շարուած էին աւարիական և ու
 սական ներկայացուցիչք , Բ . Գրան
 պաշտօնեայք : ճաշը ժամ մը և քա
 ուորդ մը տեսց եւրոպական ձեով :
 ճաշէն ետքը , օգոտտ . Սուլթանը գի
 նիէ գաւաթ մը բերնին տարաւ իշ
 խանուհւոյն կենաց համար : Սեղանէն
 ելնելով , իշխանուհին քիչ մը ժամա
 նակ Տիկին իկնաթիէֆի հետ խօսակ
 ցելէն ետքը , օգոտտ . Սուլթանին թե
 ւը մտած՝ միւս երեք տիկնացց հետ
 կայսերական կանանցը մտաւ , ուր
 բարձր . Մայրթագուհին և Պաշ—գա
 աքընը արժանաւայել ընդունելութիւն
 մ'ըրին : Օգոտտ . Սուլթանը կանան
 ցէն շուտով մեկնեցաւ իշխանին քով
 վերադառնալու համար , որ հրաւի
 ընէրց հետ սուրճ կիմէր : Այսպէս ,
 մինչև ժամը լսաւ . 10 1/2 պաշտօր
 մնալով , ետ գարձան իշխանն ու իշ
 խանուհին և բոլոր հրաւիրեալք » :

— Մատրիաէն լուր կուտան թէ
 մեծ ժողով մը ըլլալով Սպանիոյ դա
 հուն համար փորթուկալի Տօն—Ֆէր
 ախաննա նախկին թագաւորը ընտ
 րուեր է : կրտսի նաև թէ Պ . Օլօզակա
 Լիզպօն պիտի երթայ Սպանիոյ թա
 գաւորական գահը Տօն Ֆէրտինանտի
 ընծայելու :

— փարիզի մէջ իտալական նոր
 փոխառութիւն մը ստորագրուեր է
 300 միլիոն ֆրանկի համար :

— Օբինիօն Նախօնալի մէջ կկար
 դամք :

« կրտսի թէ Բրուսիոյ և իտալիոյ

մէջ պազու թիւն մը կտիրէ : Ապգէն
 կուն Պիզմարգ իսպիոյ կառավարու
 թեան դէմ ունեցած դժգոհում թիւնը
 յայտնելու համար՝ Պ . իւզաուր վո
 իւելով աեղը Պրասիէ տը Սէն Սիմօն
 կունը ընարեց : Այս վերջինը 1860ին
 թուրինի բրուսական դեպպան եղած
 էր , և Նաբօլի Պուրպօններուն շատ
 համակրութիւն ցուցնելու առիթ ու
 նեցաւ , ճիշդ այն միջոցին , երբ Բիէ
 մօն Նաբօլիի թագաւորութեանը կը
 տիրէր : Այս զանազան պարագաները
 Պէրլինի քաղաքադէպ ապացոյց մը
 կհամարին որ Ֆրանքօ—իտալական
 դաշնագրութիւն մը եղած լիննցած է :

Պաղղիարէն և Լատիներէն լեզու
 ները սովբել ու զողներու համար վը
 կայեալ գասատու մը պատրաստ կը
 գանուի , Բերա Սըրալի պաշտօնատան
 մօտ Մէքթիպ փողոց թիւ 20 :

Բինկեան գլուղի մետաքսի հուն
 ախ աղէկ տեսակէն կգանուի Պաղչէ
 գափու մաքսատան գիւնայ թիւ 31
 բինկեանցի Տ . Յակոբեանոյ Աղեկանդր
 աղային խանութը :

Հայ ազգէանց կարգուելու գիւրին ճամ
 բան , և և Հայ երիտասարդաց շրայլ—թիւնը ,
 և և Հայ կանանց շէւքիթ—թիւնը , — Գրեց
 տիկին Բրաբիոն : — Երեք զուրուշի կը
 ծախուի բոլոր Հայ գրավաճառաց քով :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
 Հ . Ս . ԱՆԱՃԱՃԵԱՆ
 ԱՊՐՈՒԹԻՒՆ Ո . Տ . ԳԻՐԲՆԵՐ